

## ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՍԱՍՏԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Լ. Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ

Արդի հայերենի մասնագիտական գրականության բառագիտության բաժիններում եղած բազմաթիվ սահմանումներից հետևում է, որ *նորաբանությունները* լեզվական այն միավորներն են (բառեր, դարձվածքներ, արտահայտություններ), որոնք փոխառվում կամ ստեղծվում են լեզվի զարգացման տվյալ փուլում կենսունակ բառակազմական եղանակներով կամ էլ բառերի իմաստների փոփոխության ու զարգացման ճանապարհով՝ նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ արտահայտելու համար, և որոնք նորաստեղծ լինելը գիտակցվում է խոսողի կողմից<sup>1</sup>:

Լեզվաբանության մեջ տարբերակվում են *բառային նորաբանություններ* և *իմաստային նորաբանություններ*՝ *Բառային նորաբանությունները* և՛ ձևով, և՛ իմաստով նորակազմ բառերն են, որոնք առաջին անգամ են գործածվում լեզվում, ինչպես՝ *լրագրահարց, կադրաշփոթ, մեծապեր, պակտազարություն, որակափոխում, շահապեր, սուպերազգային* և այլն, իսկ *իմաստային նորաբանությունները* լեզվում գոյություն ունեցող բառերի ձեռք բերած նոր, քարմ իմաստներն են\*, ինչպես՝ *սրվերային, ուժային, մեծամասնական, կառուցողական, չայներիզ, սեղմագիր, ծածկույթ* և այլն:

Մեր քննության նյութը արդի հայերենի բառային կազմի տարբեր շերտերում (գրական, խոսակցական, ժարգոնային, եզրութային) հանդիպող իմաստային նորաբանություններն են, որոնք՝ իբրև իմաստավորական նոր իրողություններ, լեզվի կատարելագործման ու մշակման, բառային կազմի արդիականացման, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող բազմաբնույթ փոփոխությունների ցուցանիշներն են:

Հայտնի է, որ բառերի իմաստային փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում բառագործածության գործընթացում և գերազանցապես փոխաբերական ու փոխանվանական գործածությունների, դրանց զանազան դրսևորումների հետևանք են<sup>2</sup>:

Իմաստային տեղաշարժերը հատուկ են բոլոր լեզուներին և դրանց զարգացման բոլոր փուլերին: Իմաստային փոփոխությունները, պայմանավորված դրանք առաջ բերող պատճառների բազմազանությամբ, խիստ բազմատեսակ են, ուստի «հնարավոր չէ սահմանել ինչ-որ ընդհանրական օրենքներ բառիմաստի փոփոխությունների համար, օրենքներ, որոնք ընդգրկեն բոլոր լեզուների, բոլոր բառերի, բոլոր ժամանակների իմաստային փոփոխությունները»<sup>3</sup>:

Այստեղ մենք, հիմնվելով լեզվաբանության կողմից մշակված ընդհանուր օրինակափոխությունների վրա, քննարկվող նորաբանությունները ներկայացնելու ենք ըստ իմաստավորական հիմունքների և իմաստային զարգացման արդյունքի:

*Իմաստային նորաբանություններ* հասկացության հիմքում ընկած է իմաստավորությունը լայն առումով, ուր, իր բազմաթիվ դրսևորումներով հանդերձ (ընդլայնում, նեղացում, շրջում, փոխհաջորդում, գործառական անցում և այլն), պայմանավորված է երկու

<sup>1</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 169-171, Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 209-210, Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 485:

<sup>2</sup> Տե՛ս Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 485:

\* Նոր իմաստներին կանդրադառնանք ստորև:

<sup>3</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 359:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 382:

հիմնական գործոնով՝ ա) լեզվի ներքին զարգացմամբ (ներլեզվական գործընթացներ) և բ) օտար լեզվական միավորի ազդեցությամբ՝ իմաստի պատճենմամբ:

«Լեզվական ազդեցությունների ամենատվորական և շոշափելի հետևանքը բառերի փոխառությունն է, բառապատճենումը և իմաստային պատճենումը, որ ազդվող լեզվի բառերի այս կամ այն իմաստն ստանալն է՝ ազդող լեզվի բառերի օրինակով»<sup>5</sup>: Ահա մի խումբ նորաբանություններ, որոնք առավելապես փոխաբերության ճանապարհով իմաստային պատճենումներ են՝ բառիմաստի կամ ընդլայնմամբ, կամ նեղացմամբ, ինչպես՝

**արհեստավարժ\*** (հմմտ. ռուս. *профессионал* < անգլ. *professional*) - «արհեստի մեջ վարժ», իմաստի ընդլայնմամբ՝ «որևէ գործի՝ գիտության՝ արվեստի ևն ճյուղի որպես մասնագետ տիրապետող, վարժ, հմուտ (պրոֆեսիոնալ)» (հմմտ. «Չեմ կարծում, թե բնավ կան **արհեստավարժ** մասնագետներ ցանկացած բնագավառում», «Ազգ», 2001): Սրանից էլ՝ **արհեստավարժական**, **արհեստավարժեցված**, **արհեստավարժորեն**, նաև **արհեստավարժացավ** դիպվածական և **արհեստավարժաիրամայական** հեզանական նորակազմությունները:

Կարծում ենք, որ մեր լեզվում դեռևս կշարունակի գործածական մնալ նաև **պրոֆեսիոնալ** փոխառյալ տերմինը, քանի որ այն բովանդակային առումով առայժմ առավել լիարժեք և ամբողջական է արտահայտում տվյալ հասկացության իմաստը:

**Հնորհանդես**, տե՛ս **գինեչոն**, **գինեօծում** - եղել է «խնջույք, խրախճան». իմաստի մասնավորմամբ նոր իմաստը («որևէ գրքի, ամսագրի, լրագրի, ձեռնարկության, ընկերության ևն աշխարհ գալու՝ մուտքի շնորհավորական հանդեսը, որ տեղի է ունենում շնորհավորանքի սեղանով») ստացել է ռուս. *презентация* < անգլ. *presentation* բառի իմաստային պատճենումով (հմմտ. «Տեղի ունեցավ հերթական նոր կուսակցության հիմնադրման **շնորհանդեսը**», «ՀՀ», 2003): Սրանից էլ՝ **շնորհանդեսային** «շնորհանդեսին հատուկ՝ վերաբերող» նորակազմությունը («Քաղաքական գործչի, պաշտոնյայի խնդիրն է ցանկացած այցից (լինի դա պաշտոնական թե **շնորհանդեսային**) «քաղեի» առավելագույնը», «ՀՀ», 2000):

Ռուսերենի խոսակցական - ժարգոնային շերտին պատկանող բառերի իմաստային պատճենմամբ է կազմվել հետևյալ նորաբանությունը.

**զցեի** (հմմտ. ռուս. *кучмы*) - փոխաբերական գործածությամբ նոր իմաստը՝ «վնասել, խաբել, նյութական վնաս հասցնել», որից էլ կազմվել է նույն բառաշերտին պատկանող **զցում** նորակազմությունը և նշանակում է՝ «փխբ. 1. խաբելով փող շորթելը: 2. Գործի՝ բիզնեսի մեջ շորթելը, սնանկացնելը» (հմմտ. «**Գցման** համակարգը կարող է դժբախտության հասցնել անմեղներին»: «Սրանցից ով փորձեց մյուսին **զցեի**», երկիրն է տուժելու», «Ազգ», 1999):

Պատճենմամբ կազմված մի խումբ նորաբանությունների իմաստափոխությունն առավելապես նկատելի է կայուն բառակապակցության մեջ, ինչպես՝

**կառույց** (հմմտ. ռուս. *структура* < անգլ. *structure*) (**իշխանական կառույց**, **ուժային կառույց** (*силовая структура*), **միջազգային կառույց** ևն) - «զերատեսչություն, համակարգ, հաստատություն» (հմմտ. «**Ուժային կառույցները** քողարկեցին իրենց գայրույթն ու հիասքափությունը», «Իրավունք», 2002),

**փաթեթ** (**բաժնեպոմաների փաթեթ**, **հսկիչ փաթեթ**, **բանակցային փաթեթ**) - (հմմտ. ռուս. *пакет* < անգլ. *packet*) *пакет акций*, *контрольный пакет* (հմմտ. *control packet*), *переговорный пакет* - «... որևէ ծրագրի, գաղափարի ամբողջությունը» (հմմտ. «Ներկայումս նրան է պատկանում այդ ընկերության **հսկիչ փաթեթը**», «ՀԱ», 2006),

**բարչք** (**բարչք փեխնոլոգիաներ** // **նորաչևություն** // **մշակույթ**) - (հմմտ. *высокие технологии*, *высокая мода*, *высокая культура*) - «զերժամանակակից, խիստ առաջադիմական» - (հմմտ. «Փարիզում ավարտվեց **բարչք նորաչևության** շարաքը», «ԵՅեր», 2005):

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 371:

\* Հոդվածի ծավալը չճանրաբեռնելու նպատակով օրինակները ներկայացված են խիստ սահմանափակ բանակով:

Օտար լեզվամտածողության, մասնավորապես ռուսերենի և անգլերենի ազդեցությանը իմաստափոխության են ենթարկվել նաև մի շարք փոխառյալ բառեր, որոնք, լինելով քաղաքական, տնտեսական ոլորտի, գիտության տարբեր ճյուղերի տերմիններ, իմաստի պատճենմամբ փոխաբերության ճանապարհով նոր իմաստներ են ձեռք բերել: Այդ բառերից են՝

**կլան** (հմմտ. ռուս. *клан* < անգլ. *clan*) - «1. դրամի տեսակ (թուրք.), 2. տոհմային համայնք կելտերի և այլ ժողովուրդների մոտ», նոր իմաստը՝ «քաղաքական, նյութական և սովերային այլ շահերով կապված մարդկանց խումբ» (հմմտ. «...Առանձին **կլանների** դեմ պայքարը ոչնչի չի հանգեցնի», «ԵՌ», 2005): Համարժեք իմաստով խոսակցական հայերենում այսօր գործածական է նաև **բայֆա** (արաբական *tavfe*) փոխառյալ ձևը,

**մեսիջ** (հմմտ. անգլ. *message*) «հաղորդագրություն, տեղեկացում, նամակ» - նոր գործածությամբ նաև «հանձնարարական, առաջադրանք» (հմմտ. «... բայց չի էլ կարելի ձեռքերը ծալած նստել, սպասել, թե Արևմուտքից երբ է «**մեսիջ**» գալու», «Իրավունք», 2006),

**մարգինալ** (հմմտ. անգլ. *marginal*) «1. լուսանցքային, 2. եզրային, ծայրի», նոր իմաստը՝ «երկրորդական, ոչ կարևոր» (հմմտ. «... մեր հասարակական գիտակցության մեջ մշակույթը համարվում է գրեթե **մարգինալ**, լուսանցքային երևույթ», «ՀԱ», 2005):

Ինչպես արդեն նշել ենք, իմաստափոխությունը կարող է պայմանավորված լինել նաև ներլեզվական գործընթացներով, երբ որևէ նոր առարկա, երևույթ, հարաբերություն, իրողություն անվանելու համար լեզուն դիմում է արդեն առկա լեզվական միավորի օգնությանը՝ փոփոխելով նրա իմաստ(ներ)ի շրջանակը՝ մասնակի կամ լիակատար իմաստափոխության ենթարկելով: Առավել հաճախ հանդիպող իմաստային փոփոխություններից են՝

1. **բառիմաստի ընդլայնումը**, «այսինքն՝ իմաստի այնպիսի փոփոխություն (ներ)ն ու զարգացումը, որի հետևանքով որևէ առարկայի (երևույթի, գործողության և այլնի) հասկացություն արտահայտող բառն իր բովանդակության մեջ է առնում նորանոր առարկաներ (հատկանիշներ, գործողություններ և այլն), որով և ընդարձակվում է հասկացության ծավալը կամ նոր իմաստներ են առաջանում»: Բերենք մի քանի առավել ուշագրավ օրինակներ՝

**դանիք**, տե՛ս **ծածկ** - ոչ միայն՝ «շինության ծածկ, առհասարակ՝ որևէ կարգի շինվածքի ծածկույթ», այլև մեր օրերում՝ «հովանավորություն, ապահովություն, քիկունք իշխանական կառույցներում» (հմմտ. «...ովքեր ԱՇ-ն դիտում են որպես հարմար **«դանիք»** այլ գործերով զբաղվելու համար», «Ազգ», 2001): Նույն բաղադրիչով են կազմվել նաև **դանիք գլխել**, **դանիք ունենալ**՝ «անօրինական գործեր կատարելու համար իշխանության կառույցներում հովանավորություն ունենալ», դարձվածքային արտահայտությունները (հմմտ. «... այդպիսի մեծ գործ սկսելու համար անհրաժեշտ է լավ **«դանիք»** ունենալ», «Ազգ», 2000),

**պապուռահան** - իր հիմնական՝ «օդ և լույս ստանալու համար պատի մեջ բացված անցք, լուսամուտ» և բազմաթիվ փոխաբերական\* իմաստներից բացի՝ այսօր գործածվում է նաև «որևէ խնդրի, հարցի ևն պլորելմի ամբողջական լուծման մեկ ուղղություն՝ պետական-վարչարարական մեկ օղակում» նշանակությամբ (հմմտ. «...որոշվեց, որ զազի հետ կապված բոլոր պլորելմները պետք է լուծվեն **մեկ պապուռահանի սկզբունքով**», «Արմենիա TV», 2005: «Համաշխարհային բանկի **պապուռահանից** ստացված գումարները կօգտագործվեն հենց այդ նպատակով», «Ազատություն» ռադիոկայան, 2006):

Բառիմաստի ընդլայնմամբ իմաստային փոփոխություններ են կրել նաև մի շարք եզրույթներներ և եզրութային արժեք ունեցող բառեր, որոնք գործածության ոլորտների ընդլայնմամբ մուտք են գործել կիրառության նոր ասպարեզ՝ ստանալով եզրութաբանական նոր գործառություն, կամ էլ վերածվել են ընդհանուր լեզվի բառի՝ չդադարելով գործել նաև եզրութաբանական համակարգում: Դրանցից են՝

\* Նույն տեղում, էջ 377:

\* Առավելապես հայտնի է «պատուհան դեպի Եվրոպա» արտահայտությունը, որտեղ **պապուռահան** բառը գործածվել է «համագործակցության նոր հնարավորություն» նշանակությամբ:

**բափարզել** «շոգեքարշի՝ վագոնի՝ ավտոմոբիլի ևն հատուկ սարք՝ հարվածի՝ ցնցման ուժը թուլացնելու համար» - իմաստի ընդլայնմամբ՝ առհասարակ «խոչընդոտ, արգելակ՝ վտանգը չեզոքացնելու նպատակով» (հմմտ. «... որ այդ քայլը կապահովի այդ երկրի՝ իբրև կրոնական արմատականության դեմ գլխավոր **բափարզելի** որոշիչ դերը», «ՀՀ», 2000): Կիրառվում է նաև որպես համակարգչային տերմին՝ **բուֆեր** (անգլ. *buffer*)՝ «ինֆորմացիայի պահեստ», փոխառյալ բառին համարժեք իմաստով: Գործածվել է նաև **բափարզել գոյի** // **բուֆերային գոյի, բուֆերային պեպուրյուն** պատճենված կազմություններում,

**պոկում** (հմմտ. *смазм*) «1. պոկելը, 2. ծանրություն բարձրացնելու եղանակներից մեկը» մարզական տերմինը փոխաբերական գործածությամբ ստացել է «բափ, առաջընթաց, սկիզբ» նշանակությունը (հմմտ. «Այն, որ այս պատերազմի դաշտում՝ Ղարաբաղում, թատյուն է ծնվում, դա հավաստում է, որ **պոկում** կա», «ՀՀ», 1994)՝

**լծակավոր** «լծակ (մետաղյա ամուր ձող, նիզ) ունեցող» - նոր իմաստով՝ «փխբ. գործելու՝ ներգործելու՝ ազդելու միջոց ունեցող» (հմմտ. «... այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը մի ինչ-որ **լծակավոր** հենակետ ունի և կարող է իրագործել իր առջև դրված խնդիրները», «ԵՌ», 2003):

**2. Բառիմաստի նեղացմամբ**, այն է՝ «բառի իմաստային ծավալի նեղացում՝ բառի ավելի լայն իմաստի կամ իմաստների մասնավորման շնորհիվ»\* իմաստափոխված նորաբանությունների շարքում կան թե՛ հնացած և թե՛ նախկին իմաստ(ներ)ը դեռևս պահպանած բառեր: Եթե վերջիններս, պահպանելով իրենց ընդհանուր գործածական նշանակությունը, մասնավորված գործածությամբ հանդես են գալիս նաև որպես որևէ բնագավառի եզրույթ կամ եզրութային արժեք ունեցող բառ, ապա հնացած բառերը հանդես են գալիս եզրութաբանական նոր արժեքով՝ նախկին իմաստ(ներ)ը լրիվ կամ մասնակիորեն կորցրած: Այսպես՝

**Ժածկույթ** – («առհասարակ որևէ բան ծածկելու կտոր, ծածկոց») բառը այսօր տընտեսագիտության մեջ ձեռք է բերել «որևէ հարկի կամ տուրքի դրամական արժեքի փոխարեն այլ ապրանքով կամ հումքով վճարելը» իմաստը (հմմտ. «Բանակցություններ են վարում պետական պարտքը ապրանքային **ծածկույթով** փակելու նպատակով», «Ազգ», 2002),

**անչկացում** – նեղվածություն» իմաստը մասնավորվել է բժշկական եզրութահամակարգում՝ «զարկերակների պատերի նեղացում» նշանակությամբ:

3. Մի խումբ բառեր իմաստային նորաբանություններ են դարձել **իմաստների փոխհաջորդման** շնորհիվ: Նշանակում է՝ «տեղի է ունեցել բառի իմաստի կորուստ, «մահացում» և նոր իմաստի ձեռքբերում, այլ կերպ ասած՝ բառի նախկին իմաստի փոխարինումը նոր ուղղակի իմաստով»<sup>9</sup>: Այսպես՝

**բաժնյակ** - նախկինում իբրև գյուղատնտեսական ոլորտի եզրույթ նշանակել է՝ «որևէ մշակույթի փորձարկմանը հատկացված խողամաս կամ փորձնական հողամասի որոշ հատված՝ բաժին», այժմ՝ «զննարկի վագոնի խցիկ՝ կուպե» (հմմտ. «Նա վեր կացավ, երբ րալով մոտեցավ **բաժնյակի** դռանը»: «Գնացքի **բաժնյակները** վեցտեղանոց էին», «ՀԶ», 1991)<sup>10</sup>,

**վարկանիշ** - նախկին՝ իբրև ֆինանսական եզրույթ՝ «տարբեր տեսակի ժամանակավոր թղթադրամ, դրամանիշ» իմաստը մթազնել է, և նոր՝ «հեղինակություն» տերմինային արժեքով առավել գործածական է քաղաքական ոլորտում: Մեր օրերում լայն կիրառություն ունի նաև **ռեյտինգ** (անգլ. *rating*) փոխառյալ համարժեք ձևը (հմմտ. «Նմանատիպ սկանդալները կարող են վատ անդրադառնալ երկրի **վարկանիշի** վրա»: «Ձեկույցը չնպաստեց նրա **ռեյտինգի** բարձրացմանը», «Իրավունք», 2004):

<sup>7</sup> Տե՛ս Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, այսուհետև՝ ԱՀՆԲ:

<sup>8</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 139:

<sup>9</sup> Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 380:

<sup>10</sup> Տե՛ս Ս. Էլոյան, ԱՀՆԲ:

4. Դիտարկվող նորաբանությունների բազմաթիվ նոր բառիմաստներ էլ առաջ են եկել *նմանական զուգորդությամբ*, երբ «առարկաների, երևույթների, հատկանիշների և այլնի միջև եղած որևէ կարգի նմանությունը առաջ է բերում տվյալ հասկացության անվանման գործածություն՝ որևէ կողմով դրա նմանությունն ունեցող առարկայի համար»<sup>11</sup>: Նմանական զուգորդումները հիմնված են բացառապես բառերի փոխաբերական գործածությունների վրա և պայմանավորված են ինչպես առարկաների, երևույթների արտաքին նմանությամբ, այնպես էլ ներքին հատկությունների ու գործառությունների, նաև մտքով, երևակայությամբ ստեղծվող ինչ-որ հատկանիշի, կողմի նմանությամբ: Օրինակ՝

*շնաշուկ* – «ծովային խոշոր գիշատիչ ձուկ (ակուլա)», փոխաբերական գործածությամբ՝ «1. գիշատիչ, գազանաբարո, 2. քալանչի, մեծ մակարդակի գոփող» («Ռուսաստանը փորձում է չափավորել «շնաշկներին» ախորժակը», «ՀԱ», 2004),

*բազմածայ* – «շատ ծայքեր ունեցող» և «փխբ. շատ ճկուն, բանիմաց» (հմմտ. «... համազգային նշանակության հրատապ հարցազրույց էր բանիմաց, *բազմածայ* մի դեկավարի հետ»)՝<sup>12</sup>: Իսկ քաղաքականության ոլորտում գործածվում է «բազմակողմանի քաղաքական ուղղվածություն ունեցող» նշանակությամբ և հանդես է գալիս կայուն բառակապակցության կազմում (հմմտ. «Մեր երկիրը պետք է վարի բազմաշերտ, *բազմածայ* քաղաքականություն», Վախյան Օսկանյանի ելույթից, «Արմենիա TV», 2006):

Նմանական զուգորդությամբ են կազմվել նաև հետևյալ պատճենյալ դարձվածքները.

*դիրիժորություն անել* – «նվագախումբ՝ երգչախումբ դեկավարել» - նոր իմաստով՝ «փխբ. իշխել, դեկավարել» (հմմտ. «... այսօր ընտրական գործընթացներում «*դիրիժորություն*» են անում խոշոր ֆինանսարդյունաբերական կորպորացիաները և ...», «ՀԱ», 2000),

*ապրակներ փայլ* – «ձեռքի ափով երեսին հարվածներ հասցնել» - նոր իմաստով՝ «փխբ. քաղաքական, ռազմավարական, տնտեսական միջոցներով պատժել՝ ճնշամիջոցներ կիրառել» (հմմտ. «Փորձում է այդ կարգի սահմանափակումներով *ապրակներ փայլ*», «Իրավունք», 2001) և այլն:

5. Հասարակարգային փոփոխությունները, նոր ձևավորված հարաբերություններն ու տեղի ունեցող բազմաբնույթ իրադարձություններն արժանանում են առանձին անհատների, սոցիալական տարբեր խմբերի, դասակարգերի և այլ խմբավորումների սուբյեկտիվ գնահատականին՝ այս կամ այն երևույթի, հասկացության, իրողության նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքով, որն արտահայտվում է համապատասխան լեզվական միավորի միջոցով կամ առանձին բառերի կրած իմաստային փոփոխությամբ: Այս առումով ժողովրդախոսակցական բառաշերտի մի խումբ բառեր, արձագանքելով մեր կյանքի նոր իրողություններին, զանազան իմաստային փոփոխությունների են ենթարկվել՝ հիմնական կամ փոխաբերական իմաստները զուգակցելով իմաստի *սուբյեկտիվ*<sup>13</sup> զգացական, դատողամտածական երանգավորմամբ: Այսպես՝

*պլսպալ*<sup>14</sup> «սահել» - նոր իմաստը՝ «փխբ. մի կերպ, դժվարությամբ դուրս պրծնել, փրկվել (որևէ փորձանքից, դժվարությունից ևն)» (հմմտ. «... այս անգամ նրանց չի հաջողվել «*պլսպալ*» մաքսատան աշխատողների ուշադրությունից», «Իրավունք», 2001),

*լողզում*՝ «ծեփում, ապականում» և «փխբ. որևէ խնդիր անորոշ՝ ոչ հստակ դարձնել, այն շրջանցելը» (հմմտ. «Իսկ կառավարությունը ձևավորվեց ապաքաղաքական արհեստավարժության սկզբունքով, ինչն ապահովում է միայն պատասխանատվության «*լողզումը*», «Իրավունք», 1999):

Իմաստային նորաբանությունների *սուբյեկտիվ կրանգավորումը*<sup>15</sup> իբրև նոր երևույթների, գործընթացների, իրողությունների, իրադարձությունների նկատմամբ առանձին մարդկանց ունեցած որոշակի վերաբերմունք, իր բնույթով բազմազան է: Հատկանշական է,

<sup>11</sup> Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 360:

<sup>12</sup> Տե՛ս Ս. Էլոյան, ԱՀՆԲ:

որ այդ կարգի նորաբանությունների շարքում թվային գերակշռություն ունեն իմաստային երանգավորում ստացած բառերը՝ պայմանավորված քաղաքական-գաղափարական վերաբերմունքով, ինչը թերևս բացատրվում է այդ բնագավառում կատարված ու կատարվող բազմաբնույթ փոփոխություններով և հասարակական կյանքում դրանց ունեցած կարևոր դերով: Այսպես՝ քաղաքական գնահատական ու վերաբերմունք են արտահայտում հետևյալ բառերի նոր իմաստները.

**կարուսել** - նոր փոխաբերական գործածությամբ՝ «ընտրակեղծիքի տեսակ» իմաստով, իբրև բացասական երևույթ, գործածվում է քաղաքական ոլորտում (հմմտ. «Ընտրապայքարում եղել է ծեծկոտուք, քվեարկությունների **կարուսել**», «Իրավունք», 2002: «Ամերիկյան կազմակերպության ներկայացուցիչներն այս անգամ հանկարծ հայտնաբերեցին, որ համատարած կիրառվում է քվեաթերթիկների **կարուսել** կոչվող ընտրակեղծիքի հնարքը», «Իրավունք», 2003),

**կերասպաշտ** // **կերասպաշտակ** // **կերակրասպաշտ** (հմմտ. ռուս. кормышка) - նոր իմաստով՝ «փխբ. պետական կառավարման լծակներից ղեկավար անձանց քաղած նյութական օգուտները», արտահայտում է բացասական վերաբերմունք (հմմտ. «...նշված երկրները իրենց ներկայացված պահանջները չկատարելու դեպքում կզրկվեն իրենց **կերասպաշտից**», «Առավոտ», 2003: «... իսկ այդ կազմակերպությունները չեն ցանկանում իրենց **կերակրասպաշտակը** որևէ մեկի հետ կիսել»: «Գլխակցում են նաև նրանք, ովքեր ընդլիճություն չեն, ովքեր իշխանության **կերակրասպաշտի** առաջ հավաքված մարդիկ են...», «Իրավունք», 2006):

Այնհայտ է, որ նորաբանությունների սուբյեկտիվ իմաստները հիմնականում բացասական – ծաղրական վերաբերմունքով են պայմանավորված, ինչպես՝

**խղճի խայթիկ** - բառակազմական ձևային՝ **-իկ** նվազական-փոքրացուցիչ ածանցի շնորհիվ, իբրև հեզմական նորաբանություն, ստացել է հեղինակային երանգ և նշանակում է «քիչ չափով՝ մի թեթև **խղճի խայթ**» (հմմտ. «Մեծամեծներ ինչքան ուզես: **Խղճի խայթի**...», «Մոլորակ», 1998)<sup>13</sup>,

**պողոկ** - դարձյալ նվազական ածանցի շնորհիվ «ուչ ուժեղ, ենթարկվող անձ» նշանակությամբ բացասական գնահատություն է արտահայտում (հմմտ. «Պաշտոնյաները Հայաստանում բաժանվում են «տղերքի» և «**պողոկներ**»): Տղերքի խնդիրն ինչքան հնարավոր է շատերին «**պողոկ**» դարձնելն է, իսկ «**պողոկներ**» խնդիրը «տղերքի» շարքում տեղ գրադեցնելը», «Մոլորակ», 1998)\*:

Գլխարկվող նորաբանություններից մի քանիսն էլ իմաստային տեղաշարժեր են ապրել՝ ստանալով ընդգծված ժարգոնային երանգ: Ինչպես՝

**ղզել**՝ «ուղղել, հարթել» - նոր՝ «1. զանազան ճանապարհներով հարստանալ, փող կուտակել, 2. շատ ձեռնտու, հարմար, օգտակար, նպատակային լինել» փոխաբերական իմաստներով դարձել է խոսակցական-ժարգոնային շերտի բաղադրիչ (հմմտ. «Այդ աշխատանքում մի լավ «**ղզեն**» իրենց: Ա՛յ **ղզեց**, պատասխանեց նրանցից մեկը», «Ազգ», 1998): Որից էլ՝ **ղզող** - «գուրեկան, հաճելի» (հմմտ. «... ու «**ղզող**» խմիչքի ազդեցությամբ շարունակում են...», նույն տեղում),

**թույն** - բազմաթիվ ուղիղ և փոխաբերական իմաստների հետ մեկտեղ՝ իբրև իմաստային նորաբանություն՝ «փխբ. ահավոր հետաքրքիր, խիստ ինքնատիպ, ցնցող որևէ բան, երևույթ (կռիկ, ֆիլմ, տեսաերիզ, անձ ևն)» (հմմտ. «Ազգային ժողովի նիստերի «**Թույն** կասետ-2» արտոնագրված տեսաերիզը շուտով ներկայացնելու է «Շարմ» ընկերությունը», «Իրավունք», 1999):

6. Իմաստային նորաբանությունների շարքում տեղ են գտել նաև **խնասպի քարմացում** ստացած մի շարք պատմաբաներ, որոնք, հասարակական գործունեության նոր ձևերով պայմանավորված, վերաիմաստավորվել են՝ դառնալով արդի գրական լեզվի բառապաշարի

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

\* Նույն տեղում: Ստեղծվել է, ըստ երևույթին, **պղեկ** -ին անձանոթ լինելու հանգամանքում:

հիմնական բաղադրիչներ: Նշված տեսակի բառերի իմաստների փոփոխությունները, նրանց գործառնության նոր նշանակությունները, այս կամ այն կարգի գործածությունները «այսօր մարդկանց կամ պետական մարմինների գործուն միջամտությամբ, գիտակցական հիմքի վրա՝ որոշ նպատակադրումով: ...Այս կարգի ակտիվ միջնորդությամբ, գիտակցաբար տեղի ունեցող իմաստային փոփոխությունները, սակայն, ավելի բնորոշ են տերմինաբանությանը»<sup>14</sup>: Այսպես՝ մերօրյա մի շարք վարչական մարմինների ու պաշտոնների անվանումներով հանդես են գալիս այնպիսի հնացած և հնացող բառեր, որոնք պատմական, քաղաքական, տնտեսական և մի շարք այլ հանգամանքների բերումով դուրս էին մղվել գործուն բառաշերտից, իսկ այսօր այլ հանգամանքների բերումով՝ իբրև տերմինային անհրաժեշտ վերաիմաստավորումներ՝ ամենօրյա լայն գործածություն են ստացել:

Այդպիսիք են՝

**ավագանի** - եղել է՝ «բարձր ազնվականների դասը», այժմ առնվել է «որևէ համայնքի՝ քաղաքի, գյուղի բնակչության շահերը ներկայացնող առանձին (ընտրովի) մարդկանց՝ ավագների խորհուրդ» նշանակությամբ,

**նախարար** - «Ֆեոդալական Հայաստանում՝ որևէ նահանգի՝ գավառի՝ երկրամասի տերը հանդիսացող իշխան», առնվել է «մինիստր» բառի նշանակությամբ՝ «պետական կառավարման որևէ ճյուղի ղեկավար»: Իբրև տերմինային նույնանիշ՝ հաճախական գործածություն ունի նաև **պեդրնախարար** ձևը,

**սպարապետ** - իմաստի քարմացմամբ գործածվում է գրեթե նույն նշանակությամբ՝ «բանակի գլխավոր հրամանատար»\*:

7. Բառապաշարի իմաստաբանական զարգացման ու կատարելագործման ուղիներից մեկն էլ **ներկեզվական հնարավորությունների** իրացումն է՝ զրական արևմտահայ աշխարհաբարից արևելահայերենին անցած փոխառյալ բառերի միջոցով, որոնք, որոշակի իմաստային փոփոխությունների ենթարկվելով, զրական արևելահայերենում ձեռք են բերել եզրութային արժեք: Այս ճանապարհով իմաստային նորաբանություններ են դարձել՝

**խոսնակ** - արևմտահայերենում «հաղորդավար» (հմմտ. ДИКТОР) իմաստը որոշակի նպատակադրումով (պետական մարմինների գործուն միջամտությամբ) արևելահայերենում նոր գործառնության նշանակությամբ ստացել է «ազգային ժողովի նախագահ» (հմմտ. անգլ. speaker<ռուս. спикер) նշանակությունը,

**փոխանցել (-ում)** - առնվել է արևմտահայերենից՝ «հայտնել, լուր տալ, տեղեկացնել» փոխաբերական նշանակությամբ (հմմտ. «Ինչպես **փոխանցեց** Ազգային ժողովի պատգամավոր Վահան Հովհաննիսյանը...»: «Լրատվական միջոցների **փոխանցմամբ** շրջանառվող լուրերը խիստ հակասական են», «Ազատություն» ռադիոկայան, 2005):

8. Մի շարք իմաստային նորաբանություններ էլ բառերի **խոսքիմասային փոխանցումների** արդյունք են, ինչպես, օրինակ, ածականների գոյականացումը: Օրինակ՝ **ուժային**՝ ածական - նորաբանությունը, որն արդի հայերենում ունի «ուժ գործադրելու կարողություն ունեցող, դյան կոչված (այսինքն՝ ՆԳ նախարարությունը, ԱԱ նախարարությունը, բանակը)» իմաստը, **ուժային կլան**, **ուժային կառույց** կապակցություններում փոխանվանաբար գործածվելով արտահայտում է ամբողջ բառակապակցության իմաստը՝ հանդես գալով որպես գոյական (հմմտ. «**Ուժայինները** քողարկեցին իրենց գայլույթն ու հիասթափությունը», «Իրավունք», 2000),

**կանաչ**՝ որակական ածականը գունային նմանությամբ պայմանավորված՝ փոխաբերական «դուր» նշանակությամբ ձեռք է բերել գոյականական իմաստ (հմմտ. «Մանավանդ երևանցի «սպերոներին զցելու» հաճույքը զուտ պլատոնական չէ, այլ «կանաչների» ստույգ ակնկալիքով», «02», 1998): Որից էլ՝ **կանաչանոց** (փխբ. դոլարանոց) դիպվածային նորակազմությունը:

<sup>14</sup> Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 369:

\* Նոր գործածությունը կապվում է հատկապես Վազգեն Սարգսյանի անվան հետ:

Խոսքիմասային փոխանցման ինքնատիպ դրսևորում է *չհասկացա* բայաձևի իմաստափոխությունը, որն իմաստային մասնավոր երանգավորմամբ դարձել է եղանակավորող բառ «այսի՛նքն, ինչպե՞ս թե (բողոքի, չհամաձանելու արտահայտություն)» նշանակությամբ (հմմտ. «Երևանցի երիտասարդը օրվա ընթացքում «չհասկացա՛» ընդդիմական բառն օգտագործում է 25-30 անգամ», «Լ.Օ», 1996)<sup>15</sup>:

Արդի հայերենի՝ վերը ներկայացված իմաստային նորաբանությունների քննությունն ի հայտ է բերում հետևյալ ուշագրավ օրինաչափությունները.

1) Հասարակության տնտեսական, քաղաքական ու սոցիալական կյանքի վերափոխումներով, մշակույթի, գիտության և այլնի զարգացմամբ պայմանավորված՝ ի հայտ են գալիս իմաստափոխական նոր իրողություններ մեր լեզվի բառային կազմի տարբեր շերտերում (գրական, խոսակցական, ժարգոնային ևն):

2) Իմաստափոխությունը պայմանավորված է՝

ա) ներլեզվական գործընթացներով և բ) օտար լեզվական միավորի ազդեցությամբ:

3) Իմաստափոխությունն ընթանում է գերազանցապես փոխաբերության ճանապարհով:

4) Մի շարք բառերի իմաստային փոփոխությունները նկատելի են միայն նոր բառագործածություններում, դարձվածքներում և կայուն բառակապակցություններում:

5) Ինչպես լեզվի զարգացման նախորդ փուլերում, այդպիսի հայերենում ևս իմաստափոխությունը, իմաստաբանական բավականին բարդ երևույթ լինելով, հետաքրքիր պատկեր է ներկայացնում ինչպես իմաստային փոփոխությունների տեսակների, այնպես էլ այդ փոփոխությունները պայմանավորող պատճառների ու հիմունքների տեսանկյունից:

#### ՀԱՄԱՌՈՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՈւ - Երրորդ ուժ (շաբաթաթերթ)

ԳԹ - Գրական թերթ (շաբաթաթերթ)

ՀԱ - Հայոց աշխարհ (օրաթերթ)

ՀԶ - Հայրենիքի ձայն (օրաթերթ)

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն (օրաթերթ)

Օ2 - Օ2 Ոստիկանական լրատու (շաբաթաթերթ)

ԼՕ - Լրագիր օր (օրաթերթ)

#### Л. Ф. САРГСЯН — *Смысловые неологизмы современного армянского языка.* —

В статье представлены смысловые неологизмы, встречающиеся в различных пластах лексического состава современного армянского языка (литературный, разговорный, жаргонный, терминологический), которые, как смысло-различительные реалии, являются показателями усовершенствования и разработанности языка, актуализации лексического состава, разного рода изменений, происходящих во всех сферах общественной жизни.

Так же, как и на предыдущих этапах развития языка, в современном армянском языке изменение значения, будучи достаточно сложным семасиологическим явлением, представляет интересную картину как с точки зрения видов смысловых изменений, так и тех причин и оснований, которыми обусловлены эти изменения.